

Հրատարակչատան կողմէ

Մկրտիչ Մարկոսեանի «Մեր այդ կողմերը» շարքի իւրաքանչիւր պատմուածք հայաբնակ հինաւորց քաղաքի՝ Տիգրանակերտի, վառ ու խօսուն պատկերագրութիւնն է: Այսօր արդէն իր բնիկ ու հարազատ տարրէն պարպուած այս քաղաքը շունչ կ'անէ, վերստին միս ու ոսկոր կը հագնի Մարկոսեանի այս գիրքով, որ սփիւռքահայ գրականութեան բազմիցս հրատարակուած հազուագիւտ գիրքերէն մէկն ըլլալու բացառիկ առաւելութիւնը ունի: Այս հրատարակութիւնը անկասկած առիթ մը պիտի դառնայ նոր ու թարմ ներշնչումներու եւ ապրումներու, զորս առատօրէն կը պարգեւեն Մարկոսեանի *այդ կողմերը* ու անոնց մշտակենդան բնակիչները:

Հրատարակուած թեան ու խմբագրուած թեան վերաբերեալ

ՄԵՐ ԱՅՆ ԿՈՂՄԵՐԸ

Արաս Հրատարակչություն
A r a s Y a y ı n c ı l ı k
İstiklal Caddesi, Hıdivyal Palas 231/Kat 1
34430 Tünel, Beyoğlu-İstanbul
Tel: (0212) 252 65 18 - 243 06 02
www.arasyayincilik.com
info@arasyayincilik.com
Sertifika No: 44967

ARAS - ԱՐԱՍ 2

ՄԵՐ ԱՅԴ ԿՈՂՄԵՐԸ
ՄԿՐՏԻՋ ՄԱՐԿՈՍԵԱՆ

Հրատարակության պատրաստեց՝
Արտաշէս Մարկոսեան

Կողքի ձեւաւորում՝
Մէլիսա Արսէնեան

Կողքի լուսանկար՝
Տիգրանակերտի Համայնապատկերը. տանիքներուն՝
ամառնային մահճակալներ եւ Ա. Կիրակոս եկեղեցւոյ
սոխազմբէթ զանգակատունը:

Տպագրութիւն՝
Սենա Օֆսեթ


Ա. տպագրութիւն (Հեղինակային) 1984
«Արաս» Հրատարակչության կողմէ՝
Բ. տպագրութիւն, մայիս 1994, Ստանպուլ
Է. տպագրութիւն, սեպտեմբեր 2023, Ստանպուլ

ISBN 9789757265016

ՄԵՐ ԱՅԴ ԿՈՂՄԵՐԸ

ՄԿՐՏԻՉ ՄԱՐԿՈՍԵԱՆ





Լուսավար՝ ԱՐԱ ԿԻՒԼԷՐ
Copyright: Ara Güler Müzesi

ՄԿՐՏԻՉ ՄԱՐԿՈՍԵԱՆ
(1938 - 2022)

ՄԿՐՏԻՉ ՄԱՐԿՈՍԵԱՆ

Ծնած է Տիգրանակերտի Խանչէբէք (Կեալուր թաղ) թաղին մէջ, 23 դեկտեմբեր 1938-ին: Նախնական ուսումը տեղւոյն Սիւլէյման Նազիֆ եւ Զիա Կէօքալի պետական վարժարաններուն մէջ ստանալէ ետք, եկած է Ստանպուլ, ուր ուսանած է Պէզճեան, իսկ ապա Կեդրոնական վարժարաններու մէջ: Բարձրագոյն կրթութիւնը ստացած է Ստանպուլի Համալսարանի փիլիսոփայութեան ճիւղէն: Գարակէօզեան որբանոցին մէջ Հսկիչ-ուսուցիչ եղած շրջանին, բանաստեղծ ընկերոջ՝ Վարդերես Գարակէօզեանի հետ եօթը թիւ հրատարակած է «Թօ» ամսաթերթը: 1966-1972 թթ. վարած է Սկիւտարի Ս. Խաչ Դպրեվանքի տնօրէնութիւնը եւ դասաւանդած է Հայերէն, փիլիսոփայութիւն: Յետոյ ասպարէզը թողած ու զբաղած է առեւտուրով՝ չղազրեցնելով սակայն գրական աշխատանքները: Հայերէն ու թրքերէն յօդուածներով ու գեղարուեստական գործերով կ'աշխատակցի Թուրքիոյ մամուլին: «Մարմարա» օրաթերթի մէջ հրատարակուած պատմուածքներուն մէկ մասը հրատարակուած է «Մեր այդ կողմերը» խորագրով, իբրեւ հեղինակի առաջին գիրքը (1984), զոր 1994-ին «Արաս» դարձեալ հրատարակած է: Այս գիրքը արժանացած է Փարիզի «Էլիզ Գալուքճեան» գրական մրցանակին (1988):

1993-ին բարեկամ ու աշակերտներու՝ Եդուարդ-Փայլինէ Թովմասեան ամուլի, Հրանդ Տինքի եւ եղբօր՝ Արտաշէս Մարկոսեանի հետ հիմնեց «Արաս» հրատա-

րակչուլթիւնը: «Մեր այդ կողմերը» գիրքի թրքերէն հրատարակուլթիւնը նախ կատարուեցաւ «Կեալուր մահալլէսի» անունով, «Պէպէքուս» հրատարակչատունէն (1992), յետոյ «Արաս»էն: Աւելի վերջ հրատարակեց «Սէօլլէ Մարկոս Նէրէլլիսէն» (1995), «Պիլլէթիմիգ Իսթանպուլա Քէսիլտի» (1998) հատորները: 1999-ին լոյս տեսաւ երկրորդ հայերէն գիրքը՝ «Տիգրիսի ափերէն»ը: «Կեալուր մահալլէսի» թրքերէնէ թարգմանուեցաւ քրտերէնի՝ «Լը պա մէ, լը վան տերան» («Մեր այդ կողմերը») վերնագրով, «Ավեստա» հրատարակչատան կողմէ (1999): 2018-ին «Արաս» այս գիրքը դարձեալ հրատարակեց Taxa Filla («Թախա Ֆըլլա») անունով: Թրքերէնով գրի առած «Թէսպիհ Թանէլլէրի» («Համրիչի հատիկներ») վէպը ստեղծեց մեծ հետաքրքրուլթիւն (2006):

«Կեալուր մահալլէսի»ն 2011-ին ամփոփուեցաւ թըրքերէն, հայերէն եւ քրտերէն եռալեզու հատորի մը մէջ: 2016-ին վերջին գիրքը հրատարակուեցաւ «Թանրընըն Սէյիր Տէֆթէրի» («Աստուծոյ նաւատոմարը») անունով: «Կեալուր մահալլէսի» 2017-ին Լոնտոնի «Կոմիտաս» հիմնարկի եւ «Արաս»ի գործակցուլթեամբ անգլերէն ալ հրատարակուեցաւ:

Հեղինակի 80-ամեակին առթիւ բոլոր գործերը ի մի հաւաքուեցան գիրքի մը մէջ՝ «Ֆըլլանամէ» խորագրով 2018-ին:

Նոյն տարին Եոսուլֆ Քենան Պէյսիւլլէն վաւերագրեց Մկրտիչ Մարկոսեանի կեանքը՝ պատրաստելով DVD սկաւառակ մը:

Տարիներ շարունակ զանազան թերթերու մէջ գրի առած յօդուածները հրատարակուեցան առանձին գիրքերով: «Էվրէնսէլ»ի գրուլթիւնները «Քիրվէմէ մէքթուլար» խորագրով նախ 2006-ին Տիգրանակերտի մէջ հրատարակուեցաւ «Լիս» հրատարակչատան, իսկ յե-

տոյ 2011-ին «Արաս»ի կողմէ: 1996-1999 տարիներու միջեւ «Ակօս» շաբաթաթերթի մէջ երեւցած յօդուածներէն ընտրանի մը՝ «Զուրնա» անունով, լոյս տեսաւ 2009-ին: Դարձեալ «Էվրէնսէլ»ի գրութիւնները «Պէլկէ» հրատարակչատան կողմէ հրատարակուեցան «Զէնկէլլի իյնէ» անունով, 1999-ին: Յետոյ «Արաս»ի կողմէ, 2010-ին:

«Ենի Եիւզըլ» եւ «Ենի Կինտէմ»ի յօդուածները 2010-ին հրատարակուեցան «Քիւրտան» անունով: Քրտական հարցին առնչուած գրութիւնները հաւաքուեցան «Մէմլէքէթ մեսելեսի» վերնագիրով, 2019-ին: 2022-ին Մարսէլի Editions Paranthèses հրատարակչատունը Փրրանսերէնով հրատարակեց հեղինակի պատմուածքները՝ *Sur les du Tigre* վերնագրով:

Թուրքիոյ մէջ, Յակոբ Մնձուրիէն ետք, հայալեզու գաւառական գրականութեան վերջին ներկայացուցիչն էր Մարկոսեան, որու մահը վերջ դրաւ նաեւ գրական այս ուղղութեան: Մարկոսեան մահացաւ 2 ապրիլ 2022-ին ու թաղուեցաւ Շիշլիի ազգային գերեզմանատան մտաւորականաց թաղը:

ՆԱԽԱԲԱՆ

Մկրտիչ Մարկոսեան կը յայտնուէր ճիշդ այն պահուն, երբ մեր գրականութեան մէջ հետզհետէ մարիլ կը սկսէին գիւղի երգիչները: Բայց հիմնական կէտ մը կար, որով Մարկոսեան կը զատորոշուէր իր մեծանուն նախորդներէն. ան մեզի կու տար այսօրուան գիւղը, այն գիւղը որուն ժամանակակիցը եղած էինք մենք:

Գիւղագրութիւնը, որպէս հիմնական ճիւղերէն մէկը մեր գրականութեան, մեր ուշագրութեան կը յանձնէ արուեստի տուեալներու քով ազգագրական տուեալներ: Արուեստն ալ բնականաբար իր դրոշմը կը դնէ անկէ բխող էջերու վրայ, բայց ան գուզընթաց կ'երթայ այն միւս թանկագին տուեալներուն հետ, որոնք գիւղագրութեան օրհնուած աղն ու հացն են: Ապագայ մարդիկ այս գրականութեան մէջէն պիտի անջատեն արուեստը եւ պիտի գուրգուրան մնացեալին վրայ, որովհետեւ գիւղագրութիւնը ոտքի կը մնայ այս վերջիններով:

Մկրտիչ Մարկոսեան, հաւատարիմ իր կոչումին, առատօրէն մեզի կը հրամցնէ իր գիւղին բարքերէն բաբա-

խուն էջեր: Հարագատ է ան, անպաճոյճ հայելի մը, որ եղածին պէս կը ցոլացնէ իր տեսածը, առանց շպար մը, գոյն մը աւելցնելու, կամ առանց սրբելու կնճիռ մը, սպի մը: Հարագատութեան այսպիսի պահպանում մը ի հարկէ տեղ-տեղ պիտի դժուարացնէր ընթերցումը, դժուար հասանելի պիտի դարձնէր գրական վայելքը, բայց այդ վայելքին անպայման պիտի հասնի այն ընթերցողը, որ պիտի գիտնայ ուշադիր նայիլ Մարկոսեանի երկարած հայելիին մէջ:

Մարկոսեան Ֆոլքլորիկ հարուստ իր մթերքին մէջ, արուեստի որոշ գիծի մը առընթեր գիտցած է գետեղել նաեւ նուրբ երգիծանքի մը ծփանքը: Առատօրէն կը գործածէ երգիծանքի տարրը, երբ կը դիմանկարէ իր տիպարները իրենց գեղջկական բոլոր բարքերուն մէջ:

Այս հատորին մէջ մէկտեղուած են քսաներեք պատմուածքներ, որոնք շատ բան ունին մեզի ըսելիք: Խօսքը անոնցն է:

Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆ
Ստանպուլ, 1984

Պատմածներուս մէջ մեր այդ կողմերը պատմեցի. այնպէս՝
ինչպէս որ տեսած էի, կամ այնպէս՝ ինչպէս որ ապրած էի:

Հերոսները եւ իրենց անուանները տուի նոյնութեամբ:

Հիմա այդ հերոսներէն՝ այդ «պաճօ»ներէն, քեռիներէն

չատերը արդէն իսկ մեկնած են «էնդի» դէմը:

Իրենց անունները՝ իրենց յիշատակները քիչ մըն ալ թող

ապրին այս տողերուն եւ այս գրքոյկին մէջ:

Մկրտիչ Մարկոսեան

ԵԿԵՂԵՑԻՆ

Կիրակի առտու կանուխ սկսաւ հնչել պատմական Տիգրանակերտի կոչնակը: Գաւառի կոչնակն անգամ իրեն յատուկ տեղական գոյն մը ունի, ինչպէս գաւառաբարբառը՝ իրը:

Ղօղանջի այդ շեշտը տղայութենէս ի վեր կորսնցուցած էի. հիմա հաճոյքով կը վերագտնէի զայն: Աւելի շատ ծերուկները կը հասկնան այդ կոչնակին լեզուէն: Ծերունիներ լեցուցած են դէպի եկեղեցի տանող ճամբան եւ անհամբեր աղօթք կը մրմնջեն:

Եկեղեցիին ընդարձակ պարտէզը հին օրերուն պէս գրաւուած է դարձեալ աղքատ հայ ընտանիքներու կողմէ: Հոն տուն-տեղ եղած են Պայտար Հէնուշը, Զուլհակ Սարգիսի երկու յիմար աղջիկները, Երկաթագործ Տիգրանի ութսունամեայ պառաւ մայրը՝ Ռէհան, Խեւ Ուսօն եւ ընտանիք մը որ դեռ վերջերս եկեր է Տալվորիկէն: Սաքանի մը հոգիի վրայ, երեք խենթերու համեմատութիւնը, պարզ դիպուածի արդիւնք չէ բնաւ: Տիգրանակերտի

յատկանիշներէն մէկն ալ իր խեւերու առատութիւնն է: Չեմ գիտեր թէ միւս քաղաքներու մէջ ի՛նչ է կացութիւնը:

Այստեղ կան վաւերական խենթեր, կան կէս խենթեր, կան խենթուկներ, կան նաեւ խենթ ձեւացնողներ, որոնք կը կազմեն այս քաղաքին պէլավըներու՝ փորձանքի դասակարգը: Այս վերջիները վեթերան չարագործներ են կամ հանգստեան կոչուած բանտարկեալներ, նախկին վատահամբաւ մարդիկ, զորոնք խեւերու դասը դրած է ժողովրդական խոհեմութիւնը, թէ՛ զիրենք կերպով մը մեկուսացնելու եւ թէ չքմեղացնելու համար ինքզինքը՝ անոնց, իր տուած տեսակ մը պարտադիր տուրք ողորմութեան համար:

-Տէր ողորմեա...

Կը լսուի քահանային ձայնը խոնաւ եկեղեցիէն, զոր երկու սիւներ կանգուն են բռներ տարիներէ ի վեր: Պատերազմի տարիներուն զինուորականութեան յատկացուած էր եւ դեռ նոր պաշտամունք կը կատարուի հոն. պատերը դեռ չեն յագեցած խոնկի հոտէն: Քրիստոնէավայել, խոնարհ խորան մը շտկուած է հոն՝ աւետարաններ, քանի մը մոմ եւ փունջ մը թօշնած ծաղիկ: Եկեղեցիին պատերէն վար կախուած են քանի մը սուրբի դէմքեր, որոնց երեսէն ժամանակը լիզեր է իւղաներկը:

Սա եօթանասուննոց ծերուկ սարկաւազն է, մանկութեանս Ծակոբ Տային: Մի՛ խաբուիք դուրսի իր բարի երեւոյթէն եւ կատակախօսութենէն. եկեղեցիին մէջ աքցանի պէս ճմլող են իր մատները, դասին մէջ անառակութիւն ընող ձայնաւորներուն ականջներուն վրայ: Բուրվառը ձեռքն է նորէն.

-Օրհնեա տէր...

Քահանային ձայնը հաճելի է պաշտամունքի միջոցին, իսկ իր խօսքերը կը դառնան զուարճալի՝ երբ քարոզի կը կենայ: Հին աւանդութիւն է որ կը շարունակուի: Բարի

քահանան եկեղեցիէն ներս մայրենի բարբառը կ'ուզէ
հնչեցնել: Բայց երբ միջանկեալ յանդիմանութեան մը
կարգը կու գայ, հոգ, ընթացիկ լեզուն կը գործածէ.

-Հը՛շտ, օղլուժ, կէօրիսէն պըզ պուրտա պօղազ փաթ-
լաթիյախ, սուս օլ:

«Լուէ՛ տղայ, կը տեսնես որ մենք հոս կոկորդ կը պատ-
ուտենք», ըսել կ'ուզէ:

Տղան կը շշմի քահանային այս սաստէն եւ խստաբիբ
ակնարկին տակ ընկճուելով, ականջ կու տայ քարոզին.

-Ըսօր Սուրբ Գրիգոր Լուսէւորչի տօն է: Գրիգոր
Լուսէւորիչէ միւր ըմմուսին մինծն է: Ըն էտին Տրդէտ
Թէգէւուր իկէր. ընի Գրիգոր Լուսէւորչին ըսեց կրօնքդ
ինքար էրէ, չէ վըր չէ քըզի խոր վիրապ կը նետեմ,
եանէ, զընտան կը թէպլիմ... Գրիգոր Լուսէւորիչ լէ իր
հէլէտքը ինքար չէրից, գնէց խոր վիրապ նստէւ. իննը
տերի հոն մնէց աչ սուսուզ...

Երբ քարոզը կ'աւարտի, այս անգամ կը սկսի իր
մաղթանքներուն, որոնց մէջ նուիրապետական կարգը
բծախնդրօրէն կը պահէ եւ իր խօսքերը կը կնքէ իրեն
յատուկ բանաձեւով մը՝ նախ հայերէն, ապա թրքերէն.

-Աստուած մեզ սուրբ խաչին շուքին տակ պահպանէ,
ամէն... Ալլահ պըզի մուպարէք վէ մուքատտէս խաչըն
կէօլկէսինտէ հըֆզ էյլէսին, ամէն...

Չվերջացաւ.

Այս բոլորէն վերջ, քահանան խորանին վրայէն կ'առնէ
թուղթ մը եւ կը դառնայ ու կը սկսի կարդալ.

-Էկիլցի Օհաննէս Տէմըրճեան, ժէմուսն էրկու քիլօ մոմ
հէտիյէ կ'էնէ. Գասպար Եէմէնիճեան մէկ օսկի ժէմուսն,
տասը օսկի տէրտէրին, մէկ օսկի լէ լուսէրէրին...

Եւ այսպէս կը կարդայ երկար շարք մը...

Քահանային այս բարբառը ժողովուրդին համար պաշ-
տօնական հայերէն աշխարհաբարն է: Իսկ երբ պատա-